ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

26 նոյեմբերի 2021 թվականի N183 - Լ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ԹԻՎ 92-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հուլիսի 7-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին կից հասարակական խորհրդի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 92-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելվածի 6-րդ կետից հանել «Խորհուրդը կազմված է առնվազն տասներեք անդամներից:» բառերը:

2) Հավելվածի 13-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «չորս» բառով:

3) Հավելվածի 14-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խորհրդի անդամները Հանձնաժողով կարող են ներկայացնել Խորհրդի նիստի օրակարգում ներառելու համար առաջարկվող հարցեր:»:

4) Հավելվածի 22-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խորհրդի նիստին մասնակցելու անհնարինության դեպքում Խորհրդի անդամը կարող է մինչև Խորհրդի նիստը ներկայացնել գրավոր դիրքորոշում օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 29-ից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ. նոյեմբերի 26
Երևան

competition.am կայքում հրապարակման օրը՝ 29 նոյեմբերի 2021 թվական: